ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի հունիսի 15-ից մինչև հուլիսի 15-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Էմմա Քյուրքչյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

- Բաժնի պետի հանձնարարությամբ մշակվել և շրջանառության մեջ են դրվել պաշտոնական գրություններ, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր, ինչպես նաև ներկայացվել են մասնագիտական առաջարկություններ և եզրակացություններ՝ բաժնի գործառույթների շրջանակում:
- Իրականացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմից, Ազգային ժողովից, պետական այլ մարմիններից, ինչպես նաև քաղաքացիներից և կազմակերպություններից ստացված դիմումների հիման վրա պաշտոնական գրությունների, տեղեկանքների և պատասխանների նախագծերի նախապատրաստման աշխատանքներ:
- Շարունակվել է համագործակցությունը միջազգային և տեղական կազմակերպությունների հետ. մասնակցություն եմ ունեցել աշխատանքային հանդիպումների և քննարկումների՝ ուղղված ոլորտի զարգացմանը և նոր նախաձեռնությունների ձևավորմանը:
- Իրականացվել են հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման վերաբերյալ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված («Աստղավարդ» ՀԿ, «Աուտիզմ ազգային հիմնադրամ», «Երջանկության ճանապարհ» ԲՀԿ, «Լիարժեք կյանք» ՀԿ, «Փրկություն» ԲՀԿ) հաշվետվությունների ընդունման, դրանց վերաբերյալ եզրակացությունների և համապատասխան գրությունների կազմման աշխատանքներ:

- Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Արմավիրի մարզում ստեղծվող Անկախ կյանքի կենտրոնի գործունեության կարգավորման վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի «Անկախ կյանքի կենտրոնի գործունեության կարգը և պայմանները հաստատելու մասին» հրամանի նախագիծը մշակվել և դրվել է ներքին շրջանառության մեջ: Ներկայացված առաջարկություններն ու դիտարկումները ամփոփվել են, և լրամշակված նախագիծն ուղարկվել է արտաքին շրջանառության՝ շահագրգիռ գերատեսչությունների կարծիքների ստացման նպատակով:

15.07.2026թ.

Փորձագետ՝ Էմմա Քյուրքչյան